

6088



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«30» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 066 - 24

Ձեռնարկողը՝

«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ
ք.Երևան, Մոսկովյան 33/1

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Խնձորեսկ բնակավայրում
բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի
կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն
Սյունիքի մարզ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 066 - 24

« 30 » Ճայխաբ 2024թ.

Սյունիքի մարզի հնձորեսկ բնակավայրում բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, հնձորեսկ բնակավայր

Ներածական մաս. Բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի և հասարակական շենքի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքի հնձորեսկ բնակավայրի Քարդաշ թաղամասի հողամաս 1 հասցեում՝ հնձորեսկ բնակավայրի մոտակա տներից մոտ 2.2 կմ հեռավորության վրա, Գորիս համայնքով անցնող՝ Մ-4 մայրուղային ճանապարհին կից:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի դ) ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել Սյունիքի մարզի Գորիս համայնքի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 23-ին տրամադրված N140 նախագծման թույլտվությունն ու 09-045-0124-0025 կադաստրային ծածկագրով N04122018-09-0021 սեփականության վկայականը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի և, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված հրավունքի տեսակը սեփականություն:



«Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցման համար նախատեսված մակերեսը կազմում է 2.1234 հա, որում ներառված է բազմաֆունկցիոնալ երկհարկանի հասարակական շենքը՝ 1202 մ³ կառուցապատման մակերեսով, ինչի համար ստացվել է համապատասխան թույլտվություն: Շենքի առաջին հարկում կգործի առևտրի կենտրոնն ու սննդի օբյեկտը, երկրորդ՝ մանսարդային հարկը կարող է ծառայել սպասարկման նպատակով:

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 18 ամսվա ընթացքում: Բոլոր կառուցվող մասնաշենքերը նախատեսված են երկաթբետոնե կրող կոնստրուկցիաներով՝ քարե պարփակող պատերով:

Հողամասի կառուցման ցուցանիշներն են՝

-Հողամասի մակերեսը կազմում է 2.1234,

-Կառուցապատման մակերեսը՝ /անջրանցիկ/ 14863.8 քմ,

-Կանաչապատման մակերեսը՝ 6370.2 քմ,

Նախատեսվող բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանը կազմված է լինելու.

-ավտոգազալցավորման ճնշակային կայանից՝ բնական գազի առաջնային կուտակիչներով և սեղմված գազի լցավորման 4 սյունակներով, սեղմված գազի ստորգետնյա պահեստային կուտակիչներով,

-բենզալցակայանից՝ 3 հատ լցասյունակային տարողություններով, պրեմիում և ռեգուլյար մակնիշի բենզինի տարողություններով՝ 2 հատ (10 խմ ծավալով), վառելիքի վթարային տարողությունով (10 խմ ծավալով),

-դիզելային վառելիքի տարողություններից՝ 4 հատ 50 խմ, 2 հատ՝ 25 խմ և 1 հատ՝ 10 խմ տարողություններով,

-պրեմիում և ռեգուլյար մակնիշի բենզինի լցասյունակներից, դիզելային վառելիքի լցասյունակից, յուղի լցասյունակից, գազաբալոնների տեղադրման և փորձարկման տեղամասերից, բենզինի և դիզվառելիքի ստորգետնյա տարողություններից, վառելիքի ավտոցիստեռնի կանգառի հարթակից, գազաբալոնների փորձարկման և տեղադրման տեղամասերից, առևտրի կենտրոնից:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանը ներառում է նաև սպասարահ, օպերատորական սենյակներ՝ ԱԳԼՃԿ-ի և բենզալցակայանի համար անձնակազմի, տնօրենի համար հանգստի սենյակ, սրճարան, էլեկտրական փակ ենթակայան, նավթորսիչ (տարողություն), սանհանգույց, հակահրդեհային գույք, հիդրանտ, վառելիքի դատարկման հոր և այլն:

Հասարակական սպասարկման նշանակության մասնաշենքն իր մեջ ներառում է սպասարահ, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար նախատեսված սանհանգույցներ, հասարակական սպասարկման՝ սրճարան, առևտրի սրահ և այլն, օպերատորական սենյակ:

Բոլոր տարողություններն ու սարքվածքները միացվում են հողանցման կոնտուրին:

Ճնշակայանի շինության հիմքերը, միաձույլ սյուները, հեծանները նախատեսված են B 25 դասի ծանր բետոնից, արտաքին պատերը՝ տուֆ քարից, ներքին բաժանարար պատերը պեմզաբլոկներից: Նախատեսվող ծածկն իրականացվում է օդափոխվող թեթև մետաղական հավաքովի կոնստրուկցիաներով: Տանիքը միալանջ է հավաքված մետաղական կարկասի վրա, ջրահեռացումը՝ կազմակերպված:



Սեղմված գազի լցասյունակները նախատեսված են միաձույլ, երկաթբետոնե ժապավենային B25 դասի ծանր բետոնից: Կրող կոնստրուկցիաներն իրականացվում են թեթև, մետաղական տարածական կարկասներից:

Սեղմված գազի պահեստային կուտակիչների երկաթբետոնյա կոնստրուկցիաներն իրենցից ներկայացնում են որպես միաձույլ կերպով իրականացված հիմնասալ և հիմնապատեր:

Տանիքը միալանջ է՝ հավաքված մետաղական կարկասի վրա, օդափոխվող, ջրահեռացումը՝ կազմակերպված:

Էլեկտրական փակ ենթակայանի հիմքերը, հեծանները նախատեսված են երկաթբետոնե, ժապավենային B25 դասի ծանր բետոնից, արտաքին պատերը՝ տուֆ քարից: Նախատեսվող միաձույլ սյուները՝ երկաթբետոնե: Տանիքը միալանջ է հավաքված մետաղական կարկասի վրա, ջրահեռացումը կազմակերպված:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀԷՑ ցանցից՝ համաձայն տեխնիկական պայմանի, պայմանագրային հիմունքներով:

Բենզինի և դիզելային ստորգետնյա տարողությունները տեղադրվում են փոսի մեջ, բետոնե հիմքի վրա, որի ներքևի նիշը հողի մակերևույթից նախատեսվում է 4,9 մ: Տարողությունների տեղադրումից հետո հետլիցքը կատարվելու է շինարարական ավազով:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի միացումն իրականացվելու է Վեոլիա ջուր ընկերության գործող՝ Փ-100 մմ ջրատարից: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար նախատեսվում է 50 մ³ տարողությամբ երկաթբետոնե ջրավազան՝ համապատասխան պոմպակայանով: Պոմպակայանից ջրագիծը միացվում է նաև 50 մ³ տարողության հովացման բաքին: Կայանը սպասարկող օբյեկտի տաք ջրամատակարարումն ու ջեռուցումը կիրականացվի էլեկտրական սարքերի միջոցով:

Կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հավաքվելու և հեռացվելու են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, որտեղից լցվելու են սեպտիկ հոր, որտեղից ավտոոցիստեռնով հավաքված կեղտաջրերը ժամանակ առ ժամանակ հեռացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի գազամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, իրականացվելու է վերգետնյա գործող գազատարից:

Շինարարության ընդհանուր հողային աշխատանքների ժամանակ 2160 խմ գրունտի մշակման դեպքում առաջացող բուսահողի ծավալը կազմելու է 240 մ³: Այն առանձնացվելու և պահպանվելու է հետագա բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար: Հողամասի հարավային մասի երկարությամբ կազմակերպվելու է բերրի: հողի պահեստ՝ ծածկի տակ և շրջանցող առուներով:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնաշաղախային հանգույցից:

Շեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ չորս փողանի հեղուկ վառելիքի լցասյունակ, (որից երեք հատը բենզինի համար, իսկ մեկ հատը՝ դիզելավառելիքի), ինչպես նաև 10 խմ տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հորեր:

Վառելիքի վաճառքի տարեկան առավելագույն քանակները նախատեսված են

-բնական գազ՝ 438. 0 տ,

-հեղուկ գազ՝ 48. 0 տ,



- բենզին՝ 180 տ,
- դիզելային՝ 120 տ:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍ 27577-87 պայմաններին: Գազի խտությունը՝ 0,65+0,85 կգ/մ³ է, նվազագույն ջերմատվությունը՝ 7920 կկալ/մ³, ԱԳԿ մուտքին գազի ճնշումը՝ 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/, իսկ մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը՝ 19,6 ՄՊա: Ելքի 0,8ՄՊա ճնշման դեպքում ԱԳԿ-ի անվանական լիցքավորման հնարավորությունը կազմում է օրական 250 մեքենա: Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 60 նմ³ է, ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար 80 նմ³: Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը՝ 70 նմ³: Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է: Աշխատող կոմպրեսորի ԱԳԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է:

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով, ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին, մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսորներ: Կոմպրեսորային բաժնից գազը տրվում է կուտակիչներ (V=400լ), որտեղից էլ ցայսյունակներ: Կայանում տեղադրվելու է ԴՄ-10/250ՄՅ2 տիպի 1 հատ ճնշակային տեղակայանք: Կոմպրեսորների սառեցումը կատարվում է ջրային եղանակով: Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ: Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ճկափողի օգնությամբ:

Տարածքի եզրային մասերում և ճանապարհամերձ հատվածներում նախատեսվում է տնկել տարածքի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներ: Եզրային մասերում նախատեսված են բարդիներ, կենտրոնական մասերում՝ վարդի թփեր, իսկ միջնամասի առանձին հատվածներում՝ սիզամարգ և ծաղկանոցներ: Հողամասում կանաչապատման համար նախատեսված ընդհանուր ծախսերը կկազմեն 2500000ՀՀ դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները՝ /ընդհանուր 150խ/մ ծավալով/, տեղափոխվելու են Գորիսի համայնքապետարանի կողմից թույլատրված տարածքում թափոնների գործող աղբավայր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել ջրցան,
- շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կազմակերպել փակ ծածկով մեքենաներով,
- ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ,
- իրականացնել շինհրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորումներ,
- շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու համար,
- շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկ առաջացնող գործողություններն իրականացնել միայն օրվա ցերեկային ժամերին,



-մեքենասարքավորումների լիցքավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ Գործողություններն իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանները և ռիսկերը,

-շինարարական աշխատանքներում ներգրավել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

-ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում,

-շահագործման ընթացքում իրականացնել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների պարբերական զննումներ,

-կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում,

-ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում,

-անձնակազմին պետք է ապահովել համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ,

-շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ,

-կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շինարարության ընթացքում, ամսական անգամ հաճախականությամբ,

-տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի, մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

-աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների և շինարարության ժամանակ, տրամադրվելու է 200.0 հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Խնձորեսկ բնակավայրում բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցման և շահագործման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի Մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական



աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

-Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

-Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ իրականացնել ցանկապատում, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ և այլն:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

-Շահագործման ընթացքում պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների պարբերական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

-Արտադրական պատահարների և տեխնաձին վթարների դեպքում անհապաղ ձեռնարկել տեխնիկական անվտանգության վկայագրով նախատեսված միջոցառումները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Խնձորեսկ բնակավայրում բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան